ԿՅԱՆՔԻ ԼՅԱՐԻԸ

Bookmark

АРМАН САГАТЕЛЯН

NERVUS VIVENDI

РОМАН

Bookmark

ԱՐՄԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԿՅԱՆՔԻ ԼՅԱՐԴԸ

ՎԵՊ

Թարգմանությունը ռուսերենից՝
Անուշ Մուրադյանի

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 821.19-31 Սաղաթելյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Ս 160

Ս 160 Սաղաթելյան Արման
Կյանքի նյարդը: Nervus Vivendi/ Արման Սաղաթելյան;
Թարգմանությունը ռուսերենից՝ Անուշ Միւրադյանի.- Եր.:
Newmag, 2020.- 344 էջ:

Ինչո՞վ էր զբաղված և ի՞նչ էր մտածում հայ երիտասարդը 1990-ականներին, ԽՍՀՄ փլուզման, անկախացման, արցախյան գոյամարտի և էներգետիկ ճգնաժամի տարիներին: Ձգո՞ւմ էր պատմական փոփոխությունների անդառնալիությունը, որի ականատեսն էր ավագ սերունդը: Եվ ի՞նչ էր նշանակում լինել 17-ամյա անհոգ պատանի երկրի համար ամենաբարդ ժամանակներում:

Արման Սաղաթելյանի ինքնակենսագրական վեպը ներկայացնում է 1991-93 թվականների Հայաստանը: Այն սև ու սպիտակ չէ, ոչ միայն հաղթական գոյամարտի մասին է, այլև ցրտի ու մթի: Ամեն ինչ ոչ շատ վատ էր, ոչ էլ լավ: Հեղինակի ձևակերպմամբ՝ տանելի էր:

Այս գիրքը ռազմաճակատում հայտնված երկու երիտասարդների մասին է: Նրանք ծնողներից թաքուն մեկնում են Արցախ ու մասնակցում Չլդրանի համար մղվող մարտերին: Արցախյան պատերազմը նկարագրված է ականատեսի աչքերով. ոչինչ չափազանցված չէ՝ ո՛չ վախը, ո՛չ համարձակությունը, ո՛չ մահը, ո՛չ էլ պայքարը:

Չլդրանի համար մղված մարտը բախտորոշ է եղել, քանի որ դարձել է պատերազմի ամբողջ ընթացքի բեկումնային պահերից մեկը: 1993-ի փետրվարի 5-ին Չլդրանի ազատագրմանը հաջորդել են հայկական ուժերի գարնանային լայնածավալ հակահարձակումը և Մարտակերտի շրջանի ամբողջական ազատագրումը:

ՀՏԴ 821.19-31 Սաղաթելյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-884-06-6

Nervus Vivendi © 2010, Арман Сагателян
Արման Սաղաթելյան, «Կյանքի նյարդը» © 2020, «Նյու Մեգ» ՍՊԸ
Հեղինակի լուսանկարը © Մարիամ Ֆայնբերգի
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին

Բովանդակություն

Գլուխ 1	13
Գլուխ 2	22
Գլուխ 3	26
Գլուխ 4	39
Գլուխ 5	43
Գլուխ 6	49
Գլուխ 7	56
Գլուխ 8	64
Գլուխ 9	67
Գլուխ 10	82
Գլուխ 11	94
Գլուխ 12	105
Գլուխ 13	116
Գլուխ 14	126
Գլուխ 15	130
Գլուխ 16	133
Գլուխ 17	136
Գլուխ 18	139
Գլուխ 19	143
Գլուխ 20	162
Գլուխ 21	180
Գլուխ 22	185
Գլուխ 23	193
Գլուխ 24	209
Գլուխ 25	216
Գլուխ 26	222
Գլուխ 27	232
Գլուխ 28	236
Գլուխ 29	242
Գլուխ 30	253
Գլուխ 31	266
Գլուխ 32	270
Գլուխ 33	293
Գլուխ 34	306
Գլուխ 35	327
Վերջաբան	337
Հեղինակից	339

Bookmark

Նվիրում եմ ծնողներիս՝ Արմենին և Տատյանային,
եղբորս՝ Վազգենին,
և ընկերոջս՝ Տիգրան Մուրադյանին

Bookmark

Հիմնված է իրական փաստերի վրա

Bookmark

– Որսորդներ կա՞ն այդտեղ՝ այդ մոլորակում:
– Ոչ:
– Ա՛յ, դա ուշագրավ է: Իսկ հավե՞ր:
– Ոչ:
– Էհ, կատարյալ բան չկա,– հառաչեց աղվեսը:

Անտուան դը Սենտ-Էքզյուպերի, Փոքրիկ իշխանը[*]

[*] Թարգմանությունը՝ Կարպիս Սուրենյանի: (Ծանոթագրությունը՝ **new**mag-ի):

Bookmark

1

Շատ եմ սիրում Երևանի կենտրոնի այս փոքրիկ այգին: Այստեղ միշտ հանգիստ է, անգամ երբ մարդաշատ է ու լի ուսանողներով, որոնք դուրս են եկել մաքուր օդ շնչելու կամ, հակառակը, դասամիջոցին ծխելու: Ինստիտուտի շենք վերադառնալու ոչ մի ցանկություն չկա: Դասախոսությունները ձանձրալի են, քանի որ «կրկնությունը գիտության մայրն է»: Հավանաբար պետք էր միանգամից երկրորդ կուրս նստել: Սակայն ուսանողների հարցում բախտս բերել է. կարծես նորմալ մարդիկ են, շատերին ծանոթ եմ դեռ դպրոցից և ընդունելության քննություններից: Հիմնականում շփվող են, նաև բավական ակտիվ:

Երեկ ինձ հետները տարան Երևանի համալսարանի կենտրոնական մասնաշենքի առաջ կազմակերպված հերթական հանրահավաքին: Շատ մարդ չկար, բայց հավաքվել էին ու, դատելով ծանոթ դեմքերից, տարբեր բուհերից էին: Բոլորը մտահոգ-լրջմիտ-վճռական դեմքեր ունեին, ձեռքի տակ եղած նյութերից սարքած պաստառներ: Մարդկանց բուրգի գագաթին գլխավոր մուտքի աստիճաններն են, եզրերին՝ բարձրախոսներ, որ արհմիության կամ ուսխորհրդի նախկին շքեղության մնացորդներն են: Կենտրոնում, կանգնակի վրա, խոսափողն էր՝ մի կերպ դրան հասցրած հոսանքալարով: Խոսափողի մոտ էլ ամբոխ է, ինչ-որ մեկը ճառում է «հայ-

ռենասիրության... անթույլատրելիության... վրդովմունքի... վճռականության...» մասին: Լավ չէր լսվում, բայց հիմնական կարգախոսները տեղ էին հասնում: Դե, կանգնեցինք, նայեցինք, լսեցինք... Իսկ հետո ինձ կարծես էլեկտրական հոսանք խփեց, մեկ էլ որ չգոռացի մարդկային այդ բուրգի հիմքից (Աստված ինձ լավ ձայն է տվել).

– Եղբա՛յր: Այս ինչի՞ մասին եք խոսում: Դուք գիտե՞ք, որ «Ղարաբաղ» կոմիտեն այստեղից 300 մետրի վրա է: Այնտեղից համարյա ամեն օր մարդիկ են մեկնում ռազմաճակատ: Քանի հավաքվել ենք, գուցե անցնե՞նք փողոցը, միասին քայլելով գնանք այնտեղ: Ի՞նչ կասեք...

Խոսափողի մոտ հանկարծ շարժվեցին: Կարծես լսել էին: Կամ էլ՝ չէ, քանի որ մի թեթև իրար անցան ու հետո էլի խոսեցին հայրենասիրությունից, անթույլատրելիությունից, վրդովմունքից ու վճռականությունից, սակայն ավելացրեցին նաև «...միջազգային հանրությունը, որը չի հանդուրժի և, իհարկե, կդատապարտի...»: Ինձ ավելի մոտ կանգնածների մեծ մասն անբարյացակամ, խեթ հայացքով նայեց ինձ: Ինչ-որ մեկն ուզեց պաշտպանել, քաջալերող արտահայտություն արեց, բայց նրան հետ քաշեցին, ու նա լռեց, քանի որ «...մեծամասնությունը հավանություն չէր տվել»:

Սույն միջոցառման մասնակից անձանց ես, իհարկե, չեմ հիշում, բայց կարծում եմ, որ նրանց ու նրանց ադրբեջանցի գործընկերներին հանդիպել եմ տասնամյակներ անց ամենատարբեր ֆորումներում և չատերում: Ամեն ինչ, ինչպես այն ժամանակ, նույնն է, նույն կարգախոսային բառակույտը: Տարբերությունը միայն այն է, որ այժմ կարելի է փողոցում չխռնվել, այլ նստել ջերմ և հարմարավետ միջավայրում, հա-

մակարգչի էկրանի առաջ: Ինչ շատ են նրանք՝ այդ կեղծ և ուռա-հայրենասերները: Ընդհանրապես այն ժամանակ և, ինչու չէ, հետագա ամբողջ կյանքում դժվարությամբ եմ հասկանում այդ հանրահավաքների իմաստը: Ինձ վստահություն չեն ներշնչում որևէ բան ապացուցելու նմանօրինակ փորձերը: Եվ առավել ևս՝ կազմակերպիչներից շատերի անձը: Ինձ շատ բան դուր չէր գալիս այն ժամանակ տարածում գտած հրապարակային քաղաքականության մեջ: Իսկ հոգուս խորքում լուրջ կասկած ունեի, որ բոլոր այս «միջոցառումները» կազմակերպվում են հանուն «ազգի բարօրության» և «պետության լուսավոր ապագայի»:

Իմ հարազատներից ոչ ոք չէր գնում բազմամարդ հանրահավաքների: Հավանաբար այդ պատճառով բավական սառը վերաբերմունք ունեի դրանց նկատմամբ: Իսկ ամենից շատ ինձ դուր չէր գալիս ցույցերի ու հանրահավաքների մասնակիցներից շատերի ֆանատիզմը: Տգիտություն և հիմարություն գումարած ֆանատիզմ. սարսափելի համակցություն է:

Մի խոսքով, հեռացանք այդտեղից... Ավելի լավ է դասախոսությունների նստել, գուցե մի հետաքրքիր բան հանդիպի, թեև զանազան «ակտիվիստներից» այստեղ էլ հանգիստ չկա: Այդպիսի արհմիութենական «ակտիվիստներից» մեկը մի անգամ ինձ զրույցի հրավիրեց: Անունը չեմ հիշում, բայց խոսակցությունը հիանալի տպավորվել է.

– Ճիշտ է, որ մարզիկ ես:

– Ճիշտ է... ու ինչ:

– Իսկ ճիշտ է, որ հասցրել ես հեռուստատեսությունում աշխատել:

– Դա էլ է ճիշտ... ինչի՞ համար եք հարցնում: